

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԻՄՔԸ*

Կ. Հ. ՇՄԻԴՏ (Բոնն)

Հնդեվրոպական (հ.-ե.) բայական խոնարհման հիման վրա հին հայերենի (հ. հ.) բայական համակարգի մեկնաբանումը ենթադրում է հին հայերենի հո-րիդոնական, այսինքն՝ բարբառային դիրքի որոշումը հնդեվրոպական առան-ձին լեզուների շարքում՝ նախապատմական ժամանակաշրջանում: Որոշիչ չա-փանիշներն են ղուղաբանությունները այլ հնդեվրոպական լեզուների հետ: Քննությունը պայմանավորում է այս զուգաբանությունների վերլուծությունը
 ա) ըստ ժառանգած ձևերի՝ ի հակադրություն նորակազմությունների, իսկ ըստ նորակազմության առաջացման ժամանակի: Ինչ վերաբերում է (ա) չափանի-շին, ապա այստեղ վավերական է Ա. Լեսկինի (A. Leskin 1876, VII) կողմից առաջ բաշխված հետևյալ մեթոդական սկզբունքը. «Սերտ ընդհանրության հատ-կանիշներ կարող են գտնվել միայն տվյալ լեզուների դրական համապատաս-խանությունների մեջ, որոնք միաժամանակ շեղումներ են այլ լեզուներից»: Լեսկինի այդ զրույթի հիման վրա առանձնակի արժեք են ստանում նաև ընդ-հանուր բառային նորաբանությունները հայերենում և հունարենում, որով էլ հաստատվում է Պեդերսենի (Pedersen 1906, 442—1982, 220) այն կարծիքը, որ «հայերենը ոչ մի այլ հնդեվրոպական լեզվի այնքան մոտ չի կանգնած, որ-բան հունարենին»¹:

- (1) Հուն. /հ. հ. *ues-nu- ‘հագնվել’ (ευνυμι/z-genum)՝ հ.-ե. աթևամտիկ *ues-ի դիմաց. ἀραρεῖν (կրկնավոր աորիստ, պերֆեկտ) ἀραρεῖ ‘հար-մարեցնել, կառուցել’ /arari². γελως /calr՝ *smei-ի դիմաց (հուն. πεῖ-δορ. γελως Հեսիքրոս, φιλολογισμός). ἀλεω /alām, ἀλειπον /aliwr՝ *mel-ի դիմաց (հայ. malem, հուն. πύλ.η):

Ի տարբերություն սույն հունա-հայկական առանձնահատուկ զարգացումների, հին հնդկական (հ. հնդ.)/հ. հ. համապատասխանությունները ունեն առավել նվազ ապացուցման ուժ: Խոսքը գնում է այստեղ միայն նորաբանություն-ների՝ Լեսկինի հասկացողությամբ, այլև ընդհանուր ժառանգության մասին, որը կապի մեջ է դրվել հ.-ե. բանաստեղծական լեզվի հետ³:

* Հոդվածը 1982 թ. Երևանում կայացած հայերենագիտական սիմպոզիումում Կ. Հ. Շմիդտի կարգադրած ղեկուցման տեքստն է: Այն գերմաներենից թարգմանել և հրատարակության է պատ-րաստել Դ. Ս. Ասատրյանը:


¹ Հմմտ. ավելի ուշ՝ Pedersen 1924, 225—1982, 308. «...հայերենը կենդանի հ.-ե. լեզվա-նյութերի շրջանում համարյա երեք կողմից սերտ ցեղակցական հարաբերություն ունի, արևմուտ-քում՝ հունարենի հետ, արևելքում՝ հնդիրանականի հետ, հյուսիսից՝ բալտոսլավոնական լեզուների հետ: Այլաներենը, որը կարող է դիտվել որպես հայերենի և բալթոսլավոնականի միջև դիրք գրա-ված, ամենայն հավանականությամբ կարող էր տեղադրվել հայերենին նշանակալիորեն առավել մոտ, եթե ավելի լիակատար կերպով ավանդված լիներ». տե՛ս այնուհետև Bonfante 1937, գրա-կանությունը՝ Porzig 1954, 155, Solta 1960, 482, Schmidt 1980 և Djahukian 1980, որը դնահատում է ըստ երեք պարամետրերի (հնչյունական զուգաբանություններ, քերականական զուգաբանություններ, բառային համապատասխանություններ):

² Godel 1975, 114111՝ համընկման բացակայություն ներկայի ավելի ուշ կազմություններում
 ἀραρ:στω arnem հմմտ. սակայն Hamp 1975, 107, որը 103 էջում նույնպես խոսում է z-genum-ի մասին:

³ Հմմտ. Schmitt 1967, 259 sq. հետագա գրականությամբ: Պորցիգը (Porzig 1954, 161 sq.) հնդարիական լեզուներից նախահայերենի փոխառությունների մասին նկատել է. «Ան ծովից. չլուսիս՝ երկրորդ հաղարամյակի կեսերին» (161):

հուներից. Φανερὸν π'εἶναι ὅτι αὐτὸ [τὸ πῦρ] καὶ ὅσους Φοῦγας συμπερὶν τοῦ παλαιότερου καὶ τοῦ νεώτερου καὶ τὰς χύνας καὶ πῦρ πῦρ.)

Պրոթեզի և աճականի՝ որպես յուրահատուկ հին նորաբանությունների, հիման վրա ես 1979 թ. հայերենը՝ հունարենի և հնդիրանականի հետ ընդգրկելի ժամանակի և տարածության եռանկյունու մեջ (triangle of time and space), որը կազմված է ըստ Մեյդի (W. Meid 1975, 203) մոդելի (համտ. Schmidt 1980, 39).



Ժամանակի և տարածության եռանկյունին հեշտացրեց 1979 թ. առաջ քաշված վարկածի ընկալումը, որը ձևակերպված է հետևյալ կերպ. «...ես համարում եմ, որ այս լեզուների միջև փոխադարձ համընկնումները նախապատմական ժամանակաշրջանում եղել են առավել լայն, որոնք մթադնվել են հետագա նորաբանություններով: Այլ կերպ ասած, կարելի է նշել, որ մ. թ. ա. XV դարի չավանդված հայերենը պետք է ավելի սերտ կապեր ունենար հունարենի և հնդիրանականի հետ, քան V դարի պատմականորեն ավանդված հայերենը» (Schmidt 1980, 39)⁸: Այս վարկածի ստուգման համար 1979 թ. քննվել էին հայոց լեզվի պատմության երեք օրինակ. 1. նախահայերենի չեզոք կրավորականը ներկայի համակարգում, 2. անցյալ կատարյալը և անկատարը, 3. եղակի գործիականը (համտ. Schmidt 1980): Իմ ներկա հոդվածում դրանցից բացի լեզվի պատմության տեսանկյունից կքննարկվեն հին հայերենի բայի խոնարհման ևս 4 կարգ. 1. դեմքի և թվի, 2. կերպի և ժամանակի, 3. սեռի, 4. եղանակի: Տեղի սղության պատճառով, բնականաբար, կքննարկվեն ոչ բոլոր մանրամասնությունները: Հրաժարվում ենք, այդ պատճառով, ընդհանուր առմամբ ոչ պարզ և վիճելի վերականգնումներից, մանավանդ երբ դրանք նախահայերենի լեզվաաշխարհագրական բնորոշման համար մեծ արժեք չեն ներկայացնում⁹:

⁸ Հմտ. դեռևս Հյուբշմանի մոտ (Hübschmann 1975, 11). «Հայերենը ըստ իր ամբողջ կառուցվածքի, թողնում է այնպիսի լեզվի տպավորություն, որը մեծ փոփոխություններ է կրել՝ կորցնելով հին ժառանգությունը և բառակազմական և բառակազմական տարրեր, սակայն կորցրածը փոխարինել է բառաթեքման նոր տարրերով»:

⁹ Հին հայերենի ոչ դիմավոր բայաձևերը բավական հաջողությամբ քննարկվել են Ռ. Շտեմպելի (R. Stempel) կողմից իր դեռ չհրատարակված, Բոննում գրված «Հայերենի ոչ դիմավոր բայաձևերը» դիսերտացիոն աշխատանքում:

Հոդվածը ավարտվում է կարևորագույն աղյուսքների ամփոփումով:

1. Գեմմ և քիվ

Ինչպես հայտնի է, հ.հ. բայական առաջնային վերջավորությունները <Primarendungen> լայնորեն պահպանված են ներկայի խոնարհման հավակարգում: Որպես օրինակ կարելի է նշել e- հիմքերի հարացույցը:

- | | | |
|-----|--------------------|-----------------------------------|
| (6) | berem < *bher-e-mi | beremk' < *berem + k' |
| | beres < *bher-e-si | berēk' < *bher-e-te + k' |
| | berē < *bher-e-ti | beren < *bher-e-nti ¹⁰ |

Մանրագրություն (6) հարացույցի

Սույն փաստերը պիտական գրականության մեջ բաղմիցս քննարկվել են: Եզ. 2-րդ դեմքը՝ beres, այլալ ձևով պահպանվել է es օժանդակ բայի ազդեցության մեջ՝ հակառակ հնչյունական օրենքի (օժ. բայի մասին տե՛ս № 8): Հատկապես փնտելի է Պեդերսենից սկսած (Pedersen 1905, 209 sqq.) քանիցս փնտարված k'-ի ծագումը¹¹, որը, սակայն, համարվում է հոգնակիացում է 1-ին դեմքի եզ. berem ձևը (այլ համարվումներ՝ *bher-e-mes/-mos): Որպես տիպաբանական դուրսհան հարավ-կովկասյան/բարթիկական լեզուներից հայտնի հոգնակի կազմության ձևի համար¹² (որը, սակայն, չի համապատասխանում հ.հ. թեքման ձևին) կարելի է նշել նաև հ. հ. ի եզ. 2-րդ դեմքի անձնական դերանունը՝

- (7) du (եզ.) du-k' (հոգն.) = berem (1 եզ.) berem-k' (1 հոգն.):

Ընդհանրապես, հաղիվ թե կասկած է հարուցում 2. հոգն. berēk'-ի մեկնումը որպես հ.հ. bherete + (1. հոգնակիի նմանարանություն)՝ k': Այդ պրոցեսին օժանդակել է համարվումը այն, որ հ.հ. *bherete-ն 3-րդ դեմքի եզ. berē-ի հետ նույնության պատճառով համարվել է հարացույցի չնշավորված <unmarkierter> հիմք (Watkins 1969, 121 sq.):

Եզ. 1-ի համար մնում է հասկանալի նշել աթեմատիկ դիմային վերջավորության՝ (-mi)-ի տեղափոխում դեպի e- և i- հիմքային դասեր. ձևափոխություն, որի համար տարբեր պատճառներ են բերվում՝

- a) օժանդակ բայի ազդեցությունը (հմտ. վերջերս Jasanoff 1979, 134):

- | | | |
|-----|--------------------------------------|----------------------------|
| (8) | em < *es-mi | emk' |
| | es < *es-si | ēk' նմանությունը ber-ēk'-ի |
| | ē նմանությունը ber-ē-ի ¹³ | en < *senti |

- b) հրամայականի հետ նույնությունից խուսափելը (Meillet 1936, 118):

- (9) *ber < *bherō, ber < *bhere (տե՛ս № 24)

c) Աթեմատիկ ներկայի հիմքի դասերի օրինակը (հիմնականում -na--ով և -nu--ով հիմքերի)՝ գործոն, որը դիտվում է նաև հին իռլանդերենի նման դարգացումների հիմքում¹⁴:

¹⁰ Meillet 1935, 117 sq., Godel 1975, 118, Schmitt 1981, 137 sqq., հմտ. նույնպես Jasanoff 1979, 134, Kortland 1981, 29 sq., որի կողմից հարացույցի հանգեցնելը «հ.հ. նախնական աթեմատիկ վերջավորություններին» (29) այնուհանդերձ չի համապատասխանում հ.հ. բայական խոնարհման զարգացման միտումներին (աթեմատիկությունից դեպի թեմատիկություն):

¹¹ Ավելի հին դրականությունը հմտ. Zeller 1924, 297, Deeters 1927, 33—45, Meillet 1920—1977, 176, Godel 1970, 102 sq., 148 sq. տե՛ս նաև վերջերս Pisani 1975, Jasanoff 1979, 134, Schmitt 1981, 139 sq.

¹² Հմտ. հին վրացերեն vixm «ես անում եմ» vixm-t «մենք անում ենք» սվաներեն xwa- «ես եմ»/xwar-d «մենք ենք» (բացառապես):

¹³ Եզակի 3-րդ դեմքի համար հմտ. վերջերս Schmitt 1981, 139:

¹⁴ Հմտ. Thurneysen 1946, 361. «Դրա ելակետը այդ պատճառով պետք է փնտրել հիմնադրանում B IV և V-ում:

- (10) հ. հ. barnam < *bhrgh-na-mi, աղ. z-genum < *-ues-nu-mi, հ. իսլ. cren(a)id «դնում է, առնում է» < *k^wri-na-ti, ro-clu(i)netthar «լսում է» < *pro-klu-ni¹⁵ < *pro-kli-nu- < *pro-k| -nu- < *prok| -neu-:

Համանման պրոցեսի համար տիպաբանական զուգահեռներ (հ. հնդ. bharāmi, հ. իսլ. -canim, սերբերեն berem) կարելի է դանել դեռևս Մելլեի մոտ (Meillet 1936, 118)¹⁶: Մնում է դրան ավելացնել, որ հ. հ. ստորադասականի կառուցվածքը <|| ապառնին>, որը համեմատելի է վեդայական ստորադասական ներկայի <conj. pres.>¹⁷ և հին իրանական ստորադասական <conj.> կազմավորումների հետ, պահպանել է թեմատիկ (*ō) վերջափոքար թվումը:

- (11) berīc < *bher-isk-o berçuk'
berçes < *bher-isk-e-si berjik'
berce < *bher-isk-e-ti bercen < *bhr-isk-e-nti:

Համաբանության (անալոգիայի) պրոցեսի բացակայությունը հ.հ.-ի II ապառնիում երեք կերպ կարելի է արժեքավորել՝ 1) որպես հնաբանություն, 2) որպես սկզբնական անցյալ կատարյալի և ներկայի խոնարհումից անկախ կատեգորիայի բնույթի ապացույց. հակառակ դեպքում համաբանության մոտքը ստորադասական ներկա (№ 39՝ sıricem) կարող էր հաստատել այն, որ ստորադասական ներկայի դեպքում խոսքը գնում է ուշ նմանակազմության մասին՝ մեծ կախվածությամբ ներկայի խոնարհումից: Եվ վերջապես 3) որպես շարահյուսական կողմնակի ֆունկցիայում հին բնույթի պահպանման ապացույց: Վերջին կետը լուսաբանելու համար կարելի է մեջ բերել Կուրիլովիչի խոսքերը (Kurylowicz 1964, 11). «...տարանջատումը (տարբերակումը) սկզբնական ֆունկցիան ընդունող ա-ի և դեռևս երկրորդական ֆունկցիան ներկայացնող լի-ի միջև հաճախակի, կարելի է ասել նույնիսկ քնական, երևույթ է»:

e- հիմքերով են սահմանափակված երկու պրոցեսներ. a) թեմատիկ /c/ ձայնավորի տարածումը (տե՛ս № 6): Այս փոխակերպումը տեղի է ունեցել այլ հիմքային դասերի (Meillet 1936, 118) և օժանդակ բայի (Bonfante 1942, 104 sq.) օրինակի հիման վրա և պատճառ է հանդիսացել դիմային վերջավորություններին նախորդող ձայնավորի ունիֆիկացիայի. b) հնչյունաբանորեն օրինաչափ e- > i- անցման բացակայությունը եղ. 1 և հոգն. 1, 3 դեմքերում և համապատասխանորեն e-ի պահպանումը: Ոչ -e- հիմքերի մոդելը պրոցեսի ընթացքում իր հերթին աղղել է օժանդակ բայի վրա: Երկու ձևափոխություններն էլ հավանաբար տեղի են ունեցել նախ և առաջ հարացույցում երկրորդական e- հիմքերի (-*eie-ով անվանական, պատճառական, կրկնական հիմքերի) ղեկավարումից հետո:

- (12) em, em-k', en. ber-e-m, -e-mk', -e-n. bern-a-m, -a-nik', -a-n.
zgen-u-m, -u-mk', -u-n ևլն:

¹⁵ B II-ը համաբանության միջոցով. Thurneysen 1946, 354 և 357:

¹⁶ Հմմտ. նույնպես Karstien 1956, 219. «Այսինքն աթեմատիկ բայերի -m-ի տեղափոխումը դեպի -e- և -eye- (համապատասխանաբար -i-) բայերը ինչպես հայերենում, այնպես էլ սլավոնականի մի մասում»:

¹⁷ Հմմտ. Thumb 1959, 197. «Վեդայերենում bravāni ձևի կողքին հանդիպում է bravā, ինչպես Ավեստայում mravāni կողքին՝ mrava 'ենս կխոսեմ'. կարճ ձևերը իրենցից ներկայացնում են հ.-ե. -ō վերջավորությամբ ստորադասական կազմավորումները: Տե՛ս նաև Watkins 1969, 60:

Թեմատիկ ձայնավորի մեջ այս համատարեցման տեղեկանքների համար առկա են սկզբունքորեն համեմատելի, սակայն ոչ լրիվ նույնատիպ զուգահեռ զարգացումներ այլ հ.-ն. լեզուներում (սլավոնական, բալթիական)¹⁸։

- (13) հին սլավոներեն nes-e-mъ, 'մենք կրում ենք', հոգն. 2 nes-e-te՝
ի հակադրության հոգն. 3 nes-ъ-тъ. լիտվերեն dirb-a 'աշխատում է', հոգն. 1. 2 dirba-me, dirba-te երկակի 1. 2 dirb-a-va, dirb-a-ta՝

ներկայի հարացույցից ավելի անորոշ են անցյալ կատարյալի (№ 14) և անցյալ անկատարի (№ 15) դիմացին վերջավորությունները։

- (14) ներգործական beri berak՝
berer berək<*bher-e-te+ k՝
berik՝
eber<*e-bher-e-t berin<*bher-?nt
Չեղտք կրավորական beray berak՝
berar berayk՝
beraw beran

- (15) անցյալ անկատար beret bereak՝
bereir bercik՝
berer berein

[a] ձևակազմիչի միջոցով նշույթավորված չեղտք կրավորական անցյալ կատարյալի ձևերը կազմվել են ըստ՝ ներգործական սեռի եզ. 1, 2 դեմքերի և հոգն. 2, 3 դեմքերի օրինակի։ Ոչ պարզ հոգն. 1. դեմքի berak՝ ձևում հավանաբար չեղտքացվել է երկու սեռի տարբերությունը¹⁹։

-ak՝ վերջավորությունը անցել է նույնպես անցյալ անկատար bereak՝-ին (№ 15)²⁰։ Բացակայող m-ի զեպրում ալն համապատասխանում է II ապտոնի ներգործական և չեղտք կրավորական ձևին՝ berçuk՝ (№ 11)²¹։ Հ.-ն. տեսանկյունից նույնացման ենթակա են անց. կատ. ներգործական հարացույցի (№ 14) եզ. 3 eber և հոգն. 2 berēk՝ (լրացուցիչ ավելացված k՝-ով) ձևերը. բացի

¹⁸ Հմմտ. Karstien 1956, 218 և (այլ կերպ) Watkins 1969, 212 sq.

¹⁹ Այս ձևի բացատրության համար հմմտ. Meillet 1936, 125. «-m-ի բացակայությունը սանսկր. -ma, հուն. μᾶν կլն-ին համապատասխանող վերջավորության մեջ կարող է լինել միայն համարանության պատճառով < analogique, по аналогии >, ինչպես berçuk՝-ում (§ 91)։ Ձայնավոր a-ն ներգործական ձևում անբացատրելի է»։ Evangelist 1955, 37 (օժանդակ բայի անցյալ անկատարի մասին)։ «-m-ը հավանաբար կորել է եզ. 1 ei ձևի օրինակով (այսինքն՝ ei'eak՝=em'emk՝)»։ Winter 1954, 199. 1975, 110 sq. -ak՝ < -amk՝ < -mk՝ «աթեմատիկ թույլ անցյալ կատարյալի» հետ (111), որպես ելակետ *-CCmV-ի (զիրքային *-CCemV- տարբերակով) համար. Jasanoff 1979, 139, 142 sq. Kortland 1981, 32՝ բոլորը չապացուցված։

²⁰ Հմմտ. Meillet 1936, 126 (անցյալ անկատարի մասին)։ «Այս ձևերը մասամբ զուգահեռ են անցյալ կատարյալի ձևերին. նրանք ունեն -r եզ. 2 դեմքում, -ak՝ հոգն. 1 դեմքում»։ Winter 1975, 120։

²¹ Հմմտ. Meillet 1936, 122 berçuk՝ ձևի մասին «-m-ի բացակայությունը չի կարող բացատրվել հնչյունաբանորեն և արդյունք է, հավանաբար -m-ի բացակայության՝ եզ. 1 դեմքում՝ berič. u-ն կարող է արտացոլել օ, հմմտ. ըզձ. հուն. εἰς, այլ կերպ՝ Godel 1975, 118. berçuk՝ <*bherisk-o-mes՝ -ow(e)h>-uk՝ անցման աստիճանով։ Նույնպես ոչ պարզ իի ապտոնի հոգն. 2 berjik՝ ձևում ներգործական և չեղտք կրավորական սեռերի համընկումը (հմմտ. № 11 և տե՛ս Meillet 1936, 123). Schmitt 1981, 100. berjik՝ ձևը հաճախ հրամայական կերպով հորդորական լիմաստով է օգտագործվում, եզ. 2 berjir-ը կազմված է նման ձևով. Jensen 1959, 93 և 102. Meillet 1936, 121՝ j<*dhy-/s. հնդկ. -dhi (-hi), հուն. -θι, Jasanoff 1979, 136, 148 sq.՝ անորոշ *dhioi, վեդ. dhyāi, ավ. diāi, հուն. (σ)θαί, թոխարերեն A և B -tsi, ումբերեն -ti. *bneredhjo > j. berej, ինչպես *medhjos > mej.

դրանից ուն՝ հոգն. 3 berin-ում: Մեկնման կարոտ է դրան հակառակ, ձայնավոր 1-ն՝ հզ. 1 և հոգն. 2, 3 ձևերում, որի բացատրության համար առաջարկվել են տարբեր վարկածներ: Այս դիմային վերջավորությունների հանգեցումը անցյալ անկատարին (հմտ. Winter 1975, 120, Schmitt 1981, 149)²² բովանդակում է -1- ձայնավորի բացատրությունը ըղձականության վարկածի <Optativhypothese> միջոցով: Քերնսի (Kerns 1939), Եվանգելիստի (Evangelisti 1955) և Վինտերի (Winter 1975) կողմից տարբեր վարկածներում առաջարկված հաշվերնի անցյալ անկատարի բխեցումը ըղձականից²³ այժմ լիովին դուրս է մղել Մելլեի (Meillet 1936, 126)²⁴ ավելի հին համադրման վարկածը (հմտ., սակայն, Jasanoff 1979, 137 sqq.):

Հետագա օրինակները անցյալ կատարյալի և անցյալ անկատարի հարացույցներից (№ 14 և 15), որոնց համար հաշվի է առնվել ուղիղ հ.-ե. կապ, հետևյալ ձևերն են՝ a) beraw, b) bēēr և beriwr, c) edī և etu, d) -r- -ով կազմություններ հզ. 2 դեմքում, e) հրամայական: a) beraw (հզ. 3 դեմք՝ անցյալ կատարյալի չեղոք կրավորական, № 14) համեմատվել է մի կողմից կատարյալ <Perfekt> և անցյալ <Präterit> ժամանակներ ցույց տվող /u/ ձևույթի հետ.

- (16) ber-a-w, ei-e-w կատարյալ վեզ. հզ. 1, 3 jajnáu, լատ. (g)nō-u-i, անցյալ կատ. ալբաներեն bashko-va (հերկա bashko-nj, bashkoj միացնում եմ), անցյալ թուր. B հզ. 1, 2, 3, հոգն. 3 prek-wa ‘հարցնում էի’, prekastā, preksa, prekar, գալիերեն հզ. 3 ieur-u ‘արեց, նվիրեց’, հզ. 1 ieur-i²⁵:

Մյուս կողմից beraw-ի նույնացումը /u/ ձևույթի հետ կորցրեց իր արժեքը այն բանից հետո, երբ Քերնսը (Kerns 1939, 30) և Պիզանին (Pisani 1951, 70) 1-ի անցումը y-ին և w-ին համարեցին պայմանավորված հաջորդ ձայնավորի ազդեցությամբ.

- (17) *bhəti->bay, *bhercti->*berey>berē (№ 6)՝ ի հակադրություն *bherato>beraw (№ 14), *cnato>cnaw²⁶:

Այս հավանական, սակայն հետագա փաստերի բացակայության պատճառով անապացուցելի, բացատրությունը կորոշ էր հաստատել հ.հ.-ի համար հ.-ե. երկրորդական միջին /*-to/ վերջավորության գոյությունը:

²² Միանգամայն այլ կերպ՝ Barton 1973—1974. -i- -ով ներդրական անց. կատ. հզ. 1 <*-ē-s-o-m՝ ի հակադրություն -ay- -ով միջին կրավ. անց. կատ. <*-a-†i (-i- ներդրականի նմանություն), *-a <*-ā-s-o-m. Ե ձ հնչյունափոխությունը արտացոլում է հին անցյալական անանցողական հակադրությունը, ինչպես որ դա հայտնի է բալթիական լեզուներից:

²³ Kerns 1939, 23. *esim, *esis...>ei, eir..., Evangelisti 1955, 33 sq. *es-iy-m, *es-i-ro..., Winter 1975, 144. *Es-iyéE-m, Es-iyéE-s..., հմտ. այդ մասին նույնպես Godel 1970, 149 sq., Schmitt 1972 [1974], 17.

²⁴ Հմտ. Meillet 1936, 126. «bere-i-ն բարձրության տեսք ունի ...», «...հրապուրիչ է -i- -ir հին-ում գիտել Վինեյլ ըստ անցյալի ձևեր. 1-ն այստեղ կհամապատասխաներ հոմերոսյան ἦν, սկզբ. asa ձևերին, այսինքն՝ հին կատարյալին <սերֆեկան>...» այդ մասին քննադատարար՝ Schmitt 1981, 141.:

²⁵ Meillet 1935, 124, Watkins 1969, 53, Bader 1978, 33 sq., Lambertz 1952, 303 sq., Krause/Thomas 1960, 270, Lejeune 1980, Lindeman 1980, 40.

²⁶ Հմտ. նույնպես Godel 1970, 144, Schmitt 1981, 150, Jasanoff 1977, 165 և 1979, 143²², որը, ըստ երևույթին չի նկատել Kerns 1939 և Pisani 1951 աշխատությունները: Վինտերը (Winter 1975, 111) չի ընդունում հզ. 3 միջին կրավորականից բացի ցարդ այլ օրինակ չունեցող «հնչյունական օրենքը». նա հակված է որպես փորձ խորհելու «W-ով միջին ձևի մասին»:

b) berer' (անցյալ անկատարի ներգործական և չեղոր կրավորական եղ. 3, № 15) դրան պատկանող հաղասական berwr-ի հետ: Այս ձևերի բնութագրումը կախված է (№ 17)-ում բերված, սակայն ոչ ապացուցելի *alo > *av հնչյունական օրենքի վավերականությունից, որը կրացատներ դրան տված Մեյլեի ավելի հին մեկնարանությունը (Meillet 1936, 127)²⁷.

(18) berer < *bhere-tor, berwr < *bher-e-tro (Մեյլե) կամ՝ berwr < *bher-e-tor ոչ պարզ e/ի հնչյունափոխությունը (Պիդանի), փոխույզ. αὐτοαχ-ε-τορ. αἰβῆρ-ε-τορ:

Անկախ աճյն բանից, թե այս մեկնարանություններից որին կարելի է հավանություն տալ, երկու դեպքում էլ հնարավոր է վերականգնել չեղոր կրավորական */tor/ ձևույթը, որը հավանականություն է ստանում փոխույզական փաստերի միջոցով: Որպես արդյունք չեղոր կրավորական երկրորդական */to/ վերջավորությունը */r/ ձևույթի կցման, չեղոր կրավորական */tor/ դիմադրի վերջավորությունը անալիզով կերպով շեղվում է հնդիրանական-հունական փեճակից և դրա փոխարեն փոխույզերեն և հայերեն մոտեցնում այլ լեզուներին. մի կողմից՝ կելտականին, թուրքերենին, մյուս կողմից՝ իսթա-անատոլիականին: Այս իրավիճակից բխում են մի շարք հետևություններ, որոնք համառոտակիորեն կարող են բերվել ստորև.

1) */r/ ձևույթի կցումը չեղոր կրավորական երկրորդական վերջավորությանը տեղի է ունեցել հայերենի՝ հնդիրանականից և հունարենից բաժանվելուց հետո:

2) Հիշյալ ձևույթի ուղ կցմանը անուղղակիորեն համապատասխանում է հնդիրանականում և հունարենում չեղոր կրավորական երկրորդական վերջավորության ուղ նշույթավորումը <Markierung> /i/ ցուցական <դեկտիվ>: հնչյունի միջոցով՝ *to > toi, մի պոռցես, որը տեղի է ունեցել ներգործական *ti-ի օրինակով և զետ ցույցություն չի ունեցել հ.-ն. ինյունկտիվի շրջանում²⁸:

3) Ուղղակիորեն */r/ ձևույթի ուղ առաջացումը կարող էր հաստատվել նրա օժանդակ <ֆակուլտատիվ> օգտագործմամբ իսթա-անատոլիական լեզուներում և ածանցավորված դերանունների միջոցով՝ հին իուլանդերենում. վերջիններիս միացմամբ (կցմամբ) հին իուլանդական «ներգործական սեռ/զեպոնենս-տային խոնարհում <Deponens-Flexion>» հակադրությունը չեղաբացվում է օգուտ ներգործականի: Անատոլիական հարաբերակցությունների այստեղ առաջարկված բացատրությունը այնուհանդերձ փեճելի է.

(19) Խեթ. ki-it-ta ի հակադրություն ki-it-ta-ri, պալայերեն ki-i-ta-ar, հին իուլ. firiānitchth-i «նա արդարացնում է նրան» ի հակադրություն firiānigid-ir «նա արդարացնում է»²⁹:

²⁷ Հմմտ. դրանցից տարբեր կարծիքներ. Watkins 1969, 175. Winter 1975, 111, որը սակայն էջ 118-ում er ձևը չի կարողանում բացատրել. «Es-ıyeE-ı-ը կարող էր տալ միայն *eıa և... Es-ıE-ı-ը կտար հավանաբար ẽ». iwr-ի մասին հմմտ. Pisani 1951, 70. «berivr ձևի վերջավորությունը առաջացել է *-to-r-ից». Jasanoff 1977, 165. «Արդյո՞ք -lwr-ը այստեղ շարունակում է *-etor կամ *-itor (<*-etor կամ *-ijetor) ձևերը...», 1979, 137. Godel 1975, 120¹², որը -iwr-ը բացատրում է որպես -ıw-ի բնագործակված ձև, այսինքն՝ մի վերջավորության, որը կարող էր կապ ունենալ անցյալ կատարյալ եղակի 3-րդ վերջավորության -w-ի (bera-w, eıe-w) և մեկուսացված եզ. 3-րդ ıciw ձևի հետ»:

²⁸ Հմմտ. Hoffmann 1967, 27՝ ինյունկտիվի ձևական սահմանման համար. «ներկայի, անցյալ կատարյալի, կատարյալի հիմքերից ածանցված, առանց աճականի ձևեր՝ երկրորդական դիմային վերջավորությամբ»:

²⁹ Neu 1968, 140 sqq. և Cowgill 1974, 561 ելնում են անտոլիական լեզուներում r-ի հետագա կորստի փաստից: Հին իուլ.-ի կապակցությամբ հմմտ. Thurneysen 1946, 270. «Գեպոնենստային բայերը <deponent verbs> միշտ ստանում են ներգործական ձևեր, երբ նախորդում են ածանցավորված դերանուններին», Wagner 1954, 91. «Սկզբնապես

4) */tor/ ձևովի միջոցով վկայված եղ. 3 միջին կրավորական վերջավորությունը իրենից նեոկայացնում է եղ. 3 դեմքում նկատված հնաբանություն, որի համար հայերենից դուրս կարելի է բերել տիպաբանական զուգահեռներ օրինակ հին իռլանդերենից. եղ. 3 անցյալ անկատար -bered <*bhereto, որտեղ պահպանվել է */to/ երկրորդային վերջավորությունը: Հ.հ.-ի ներսում՝ թեմատիկ է աթեմատիկ խոնարհման վկայություններ անցյալ կատարյալի եղ. 3 դեմքի համար՝ eber <*epneret (№ 14), ed համապատասխանաբար et <*edhēt հմպա. *edot (№ 20), թերևս նույնպես beraw <*bherato (№ 17) կամ էլ /u/ ձևովի հետ (№ 16):

5) Առաջնային, միայն ներկայով սահմանափակված */tor/ վերջավորության հետագայում հ.հ.-ի անցյալ անկատարի համակարգ տեղափոխման <Übertragung> համար գոյություն ունեն զուգահեռներ այլ հ.-ե. լեզուներում՝ լատիներենում, կելտերենում՝ ի տառերություն թոխարերենի և խեթերենի, որտեղ նման տեղափոխություն տեղի չի ունեցել:

6) edī «ես զրեցի» և etu «ես տվեցի» ձևերը Բոնֆանտեի (Bonfante 1942) կողմից հանգեցվում են թեմատիկորեն խոնարհվող հ.-ե. s- անցյալ կատարյալին <S-Aorist> և գրանով հաստատում են եղ. 1-ի համար /m/ ներգործական երկրորդային վերջավորությունը և տվյալ դեպքում՝ /nt/ երկրորդային վերջավորությունը՝ հոգնակի 3-ի համար. սխնամենայնիվ հոգնակի 3-ի համար կարող է առկա լինել ձայնավորի հավասարեցում նմանաբանություններ.

(20) edi <*e-dhē-s-o-m	etu <*e-do-s-o-m
edir	etui
ed <*e-dhē-t	et <*e-dō-t
edak'	tuak'
edik' <*e-dhē-te+k'	etuk' <*e-do-te+k'
edin <*e-dhē s-nt	etun <*e-do-s-nt

S- անցյալ կատարյալից (թեմատիկ՝ եղ. 1-ում, տվյալ դեպքում՝ աթեմատիկ՝ հոգն. 3-ում) և աթեմատական անցյալ կատարյալից (եղ. 3, հոգն. 2) այս վերականգնման հիման վրա ստացված հարացույցային ամբողջությունը Բոնֆանտեն համեմատում է սլավոնական հարացույցների վարքի հետ.

(21) edi=հ. սլավ. dēchъ, ed=հ. սլավ. dē, վեդ. adhat. edik' ի հակադրություն հ. սլավ. edeste, edin=հ. սլավ. čěšę, հուն. -αα, etu=հ. սլավ. dachъ, հմմտ. ալբան. dašë, et=հ. սլավ. da, վեդ. adāt. etuk' ի հակադրություն հ. սլավ. daste, etun=հ. սլավ. dasę, հուն. -αα ³⁰ :
--

Որպես այս հարացույցի ձևավորման Terminus post quem կարելի է դիտել նախահայերենի՝ հնդիրանականից և հունարենից անջատման ժամանակը:

d) եղ. 2 berer, berar (№ 15) վերջավորությունների r-ն Մելլեի կողմից (Meillet 1936, 125) բացատրվում է r-+ ձայնավորից բաղկացած մասնիկի

ազատ հանդես եկող *-r(ո) մասնիկը չէր կարող մտնել բայաձևի մեջ, եթե այնտեղ առկա էր այլ մասնիկ. այս դեպքում՝ ածանցավորված դերանվանական խնդիր», Lewy 1967, 217:

³⁰ Հմմտ. նույնպես Godel 1970, 149. 1975, 126, Schmitt 1981, 51, 156. Ալբաներեն dasë <dəsom (Bonfante 1942, 1023) կամ՝ *dəsm (Pokorny 1959, 224), այլ կերպ՝ Lindeman 1975/1976, 14 sq.՝ *e-dhē-yom, *e-dō-yom: Սլավոնականի մասին հմմտ. Leumann 1959, 393. Վերան համապատասխան սլավոնական սույն անցյալ ժամանակը կազմված է արմատական անցյալ կատարյալից՝ եղ. 2. 3 և s- անցյալ կատարյալից (ինչպես հ. հնդկ. aṅasam)՝ մնացած դեմքերում:

միջոցով (հմմտ. հուն. $\rho\alpha$, լիտվերեն ir), որը առկա է նույնպես ներկայի հիմքից ածանցված արդելական հրամայականում³¹:

(22) ներդրածական $mi\ sire-r$, հոգն. $mi\ sir\check{e}k'$, $mi\ lar$, հոգն. $mi\ layk'$:

Այս աեսություն կողքին դուռնություն ունեն մի շարք այլ վարկածներ, որոնք սակայն առավել քիչ համոզիչ են³², ինչն էլ մենք կփնտրենք հ.հ. Եզ. 2 անցյալ կատարյալ *e-bher-es ձևից, որը համեմատելի է Եզ. 3 *e-bher-et ձևի հետ (տե՛ս N° 14), ապա Մեյլեի կողմից առաջադրված ունիվերսալիզմի (r+ձայնավորից կազմված) մասնիկի հետ կարելի է տեղադրել ժամանակի տեսանկյունից s-ի սղման և ածականի կորստի միջև:

(23) *e-bher-e-s + մասնիկ > *e-bher-e + մասնիկ > bhere + մասնիկ = berer³³:

Եզ. 2-ում ունիվերսալիզմի (մենարայացման) պատճառներից մեկը այդ դեպքում կարող է լինել Եզ. 3 դեմքի՝ *e-bher-e-t > eber-ի հետ համընկնումից խոստովելը:

Ե) Բուն հրամայականը (հրամայական կզանակի ներկա) պետք է տարբերել բառ ներդրածական և միջին կրավորականի ձևերի:

(24) ներդրած. $ber < *bher-e$, հոգն. $ber\check{e}k' < *bher-e-te-k'$, $sirea < *sireac < *kir-e\check{a}-sk-e$ (հմմտ. $ka\check{c}$, hat), հոգն. $sire\check{c}ek' < *kir-e\check{a}-sk-e-te-k'$, միջին կրավ. $sireac$, հոգն. $sirecaruk'$, $berir$, հոգն. $beraruk'$, առանց բայաստի տարբերակման՝ $ber\check{i}r$, հոգն. $ber\check{i}k'$ ³⁴:

³¹ Որպես հրամայական կիտավոր ներկայի հիմքից ածանցված ձևեր a) er 'կղեր', հոգն. ek' , $o\check{i}j$ er 'չափք' ի հակադրություն $mi\ linir\ anhawat$, b) $io\check{i} z-$ «բացի, բացառությամբ» < $io\check{i}ur$ ($io\check{i}um$)՝ $io\check{i} zayl\ bazum$ $t'armatarsn$ «բացի բազում այլ ավելորդաբանություններ» (Jensen 1959, 94):

³² Հմմտ. Meillet 1936, 119, որը կլակետը դիտում է հրամայականում. «-r տարրը կարող է լինել այստեղ միայն մասնիկ՝ առաջացած r+ձայնավորից կազմված ձևից, որը ի հայտ է գա-

լիս հուն. $\rho\alpha$, լիտվ. ir մասնիկներում, փաստ, որը թույլ է տալիս խոսելու ձայնավորի մասին. ...Մասնիկի կցումը հրամայականին չպետք է դարձանալի թվա». այլ կերպ՝ Winter 1975, 115 sqq. (Pedersen 1935)-ի կապակցությամբ. *us, *is (ներառյալ *is < es) անցումը (*ur-ի, ir-ի, Գառնոֆի (1979, 144 sqq.) առաջարկված -aruk'-ի (ber-aruk') հանդեպման համար *(-a)-dhue(s) / *(-a)-dhue(s) ձևին (հմմտ. վեդ. $bharadhvam$, հուն. $\varphi\acute{\epsilon}\rho\epsilon\tau\eta\epsilon$, լեթ. $esduma$) $dh\check{u}r$ անցումով միջձայնավորային զերբում բացակայում են հնչյունական զուգահեռներ: -aruk'-ի մասին հմմտ. Pedersen 1905, 213 sq. (= 1982, 75). «bazmacaruk'-ը՝ bazmanam ձևից, Սա պարզապես եզակի $bazmacir$ ձևի հոգնակիացումն է՝ a ձայնավորով, r-ից առաջ, ինչպես կրավորական անցյալ կատարյալի այլ ձևերը: Հմմտ. նույնպես (ի հավելումն եղած վարկածներին) Kortland 1981, 32, հոգն. 3 անցողական *ntro անանցող. -ro > եզ. 3 *-tro (< անցող. *-to անանց. *-o) > եզ. 2 -ro (< անցող. *-stHo) անանց. *-stHo). Այն պատճառով, որ t-ն դարձել է Եզ. 3 դեմքի բնորոշ գիծը, Եզ. 2 վերջավորությունները փոխարինվել են -so-ով, որը ստեղծվել է ներգործական վերջավորությունների օրինակով: Միջձայնավորային s-ն սղվելով, -ro վերջավորությունը տարածվել է Եզ. 2 վերջավորությունների վրա...»:

³³ Հմմտ. Schmidt 1980a, 4 sq., այլ կերպ՝ Wackernagel 1906, 147 (հմմտ. Schmitt 1981, 149):

³⁴ Հմմտ. 21 ծանոթադրությունը. տե՛ս նաև Jensen 1959, 100 sqq., Meillet 1913, 93, 96-1936, 119 sqq., Godel 1975, 42, 45 sq.

Հ.-Ե. վիճակը լավ են պահպանել ներգործական ձևերը ինչպես *ber* < **bhe-re* (տե՛ս նաև՝ № 9)։ որտեղից *berek* -ը < ինյունկտիվ *bherete* - *k*՝, կազմում է հոգնակի ձև³⁵։

2. Կերպ և ժամանակ

Հոլթի (J. Holt 1943) տերմինաբանությունը հ.-ե. կերպային երկակի հակադրությունը համապատասխանում է 'aspect flexionnel'-ին. կատարյալ կերպը կազմում է ավելի ուշ անցյալ կատարյալի հիմքը, անկասալիք՝ հանդիսանում է նախաստիճան ներկայի համակարգի համար։ Կերպի կատի-դորիայից դուրս է մնում պերֆեկտի հիմքը, որը «նախ և առաջ... բնորոշում է ձևը բերված վիճակի <erreichten Zustandes> անսնցողական պերֆեկտը, որը բացիմաստի միջոցով արտահայտում է ավարտված պրոցեսի տևողությունը կամ հետևանքը խոսողի մոտ՝ ներկա ժամանակում» (Schwyzer 1950, 263)՝։ Այնպիսի հին հ.-ե. լեզվում, ինչպիսին հունարենն է, անցյալ կատարյալը և պերֆեկտը բաժանվում են ձևաբանորեն և ըստ գործողության. Հոմերոսի մոտ դեռ գոյություն չունի արդյունքի պերֆեկտ։ Ավելի ուշ ավանդված հ.-ե. լեզուներում, ինչպես, օրինակ, լատիներենում, գերմանական լեզուներում, կելտերենում կամ սլավոնական լեզուներում, ընդհակառակը՝ պերֆեկտը և անցյալ կատարյալը հակված են համընկնելու մի անցյալ ժամանակում և որպես դրա հետևանք՝ ստեղծելու պերֆեկտի նոր՝ պերիֆրաստիկ կազմություն³⁷։ Հին հայերենը ներկայացնում է այս նոր իրավիճակը՝ ձևափոխված կերպով. չնայած նրանում զարգացվել է պերիֆրաստիկ պերֆեկտ, հիմա. օրինակ.

(25) *gorceal e nora zgorc* «նա կատարեց աշխատանք»,

ժառանգված հ.-ե. պերֆեկտի կազմությունները չեն պատկանում այն երեք կոմպոնենտներին՝ a) անցյալ կատարյալ, b) թեմատիկ անցյալ անկատար, c) անցյալ անկատար, որոնք կազմում են անցյալ ժամանակին <Praeterit> համապատասխանող հին հայերենի անցյալ կատարյալի նախապատմական աղբյուրները.

(26) *edi, ed. etu, et* (№ 20, 21). *elik*՝, անց. կատ. հ. հնդ. *āricat*, հուն. *ἔλιπες*, *egit*, անց. կատ. հ. հնդ. *avidat*. b) *eber* (№ 14), անցյալ անկատար հ. հնդ. *abharat*, հուն. *ἔφερες*, *eharç*, անց. անկ. հ. հնդ. *aprecnat*, c) *elic* < **eplēsket*, անց. կատ. **epret* (հ. հնդ. *āprat*, հուն. *ἔλιγε*), *gitaç* < **uoidasket*, *gorceac* < **uorgejasket* *և* (Schmidt 1980, 42–46)։

Պետք է նշել, որ a) և b) կոմպոնենտները հանդիսանում են ոչ պրոդուկտիվ լեզվական մնացորդներ. այն դեպքում, երբ c)-ն իրենից ներկայացնում է պրոդուկտիվ նորակազմություն։ Հ.-ե. կրկնական տևողականին <Iterativa-durativa> հարող **sk-* կազմությունների գործունեությունը (հիմա. Schmidt 1980, 42 sq.) հանգեցրել է ավելի հին, անցյալ կատարյալ նշող կազմություն-

³⁵ Հիմա. Watkins 1963, 47. «...որ համայականի նոր ձևերը, օրինակ լատ. -*ic*, շարունակում են հ.-ե. ինյունկտիվը՝ երկրորդային վերջավորություններով՝ սահմանականի ամենահին ձևը»։

³⁶ Պերֆեկտի՝ որպես իրավիճակի արտահայտության նախապատմության մասին հիմա. Schmidt 1979, 77 (Perfectum intensivum) և Cowgill 1979, 33 sqq., որը տարբերակում է մասնում *verbs proper*-ի (որպես անցյալ կատարյալի և ներկայի նախաստիճանի) և *nominal verbs*-ի (որպես հ.-ե. պերֆեկտի և անատուլիական *ly-*ի խոնարհման նախաստիճանի) միջև։

³⁷ Հիմա. Schmidt 1964, Կուրյովիչի (Kurylowicz 1956, 25 sqq.) կողմից ներկայացված պրոցեսը համապատասխանում է Բենվենիստի Conservative mutation-ին (Benveniste 1968, 86 sqq.)։

ների դուռս մղմանը՝ վերևում՝ (26) a) և b) կետերի տակ նշված տիպերից հատկապես բնութանուր հ.-ե. հիմքի վրա նոր S- անցյալ կատարյալը, կարող էր հ.հ.-ի ավանդման սկզբից առաջ զգալիորեն ավելի կայուն ֆունկցիա ունենալ: Հ.հ.-ի անցյալ կատարյալի վերացմանը, որը մի ամբողջ շարք հ.-ե. լեզուններում (հունարեն, հնդ. իր., սլավ., լատ., կելտ.), բնդհականակր, առանձնապես զործուն է դարձել, կարող էր նպաստել հին հայերենում միջձայնավորային S-ի հնչյունաբանորեն օրինաչափ սղումը: Դա լավ էր համարվում է նրանից, որ S- կազմութունները նախապատմական ժամանակաշրջանում մեծ չափով անցյալ կատարյալով են փոխարինվել: Այս կարծիքը փոքր-ինչ այլ կերպ արտահայտել էր դեռևս Պեդերսենը (Pedersen 1905, 212-1982, 74). «Անցյալ կատարյալի այս հիմքը հետագայում բնդարձակվել է (սլավոարանվել է՝) -հ- ինխոտարի-վի (հ.-ե. -sk-) միջոցով»³⁸:

Ինչ վերաբերում է հին պերֆեկտի ձևերին, ապա նրանք, ինչպես արդեն նշվեց, հին հայերենում, ի տարբերություն այլ հ.-ե. լեզուների (լատ., կելտ., ալբան., հատկապես դեռժանական լեզուների), չեն ներառվել անցյալի հարացույցի մեջ³⁹: Հին հայերենը այս տեսակետից նմանվում է ավելի շուտ նոր հունարենին կամ սլավոնականին, որոնք նույնպես կորցրել են անցյալի իմաստով օգտագործվող պերֆեկտը՝ բացառյալ չնչին մնացորդների նոսր հունարենում (Schwyzer 1953, 779): Դրան հակառակ, հին հայերենի ներկայի համակարգը պահպանել է perfecto-praesentia-ի մի քանի ձևեր՝ ներկայի հարացույցում⁴⁰:

